# ՌՈՒԴՈԼՖ ԳՐԻԳՈՐԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կյանքից վաղաժամ հեռացավ անվանի գիտնական, երկրաբանական և հանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուդոլֆ Գրիգորի Գևորգյանը:

Ռ. Գևորգյանը ծնվել է 1935թ. Հայաստանի Վանաձոր քաղաքում:

1959 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի Պետական Համալսարանի երկրաբանական ֆակուլտետը:

1959–1961 թթ. աշխատել է Հայաստանի Ժող. տնտ. խորհրդում և Հայկական երկրաբանական վարչությունում:

1962 թ. ընդունվել է ԽՍՀՄ ԳԱ Վերնադսկու անվան երկրաքիմիայի և անալիտիկ քիմիայի ինստիտուտի (ԳԵՈԽԻ) ասպիրանտուրա, որտեղ և 1965 թ. պաշտպանել է թեկնածուական թեզը:

Վերադառնալով Հայաստան աշխատել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտում (1966–1978 թթ.) որպես գիտահետազոտական բաժնի գիտ. քարտուղար, երկրաբանության, հետախուզման տեխնիկայի ամբիոնի դոցենտ:

1967–1968 թթ. գիտական վերապատրաստում է անցել Գերմանիայի Ֆրայբերգի Լեռնային Ակադեմիայում: Կազմակերպել և մասնակցել է ուսումնական պրակտիկաներ, ասպիրանտների համատեղ գիտական աշխատանքներ, ուսանողների և դասախոսների փոխայցելություններ:

1978թ. հիմնադրել և մինչև 1993թ. որպես տնօրեն աշխատել է Վերնադսկու անվան երկրաքիմիայի և անալիտիկ քիմիայի ինստիտուտի հայկական, գիտահետազոտական երկրաքիմիական մասնաճյուղում:

1993 թ. աշխատել է որպես տնօրեն Սեյսմիկ Պաշտպանության Ազգային Ծառայության Երկրաքիմիական Կենտրոնում, իսկ 1993–1994 թթ. ՍՊԱ Ծառայությունում, որպես գլխավոր տնօրենի տեղակալ: Այնուհետև 1993–1996 թթ. աշխատել է ՀՀ Արտակարգ իրավիճակների վարչությունում, որպես միջազգային կապերի բաժնի վարիչ: 1994 թ.-ից դասախոսել է Երևանի Պետական Համալսարանում, երկրաբանական ֆակուլտետի միներալոգիայի և պետրոգրաֆիայի ամբիոնում:

1995 թ. Ռուդոլֆ Գևորգյանը պաշտպանել է դոկտորական թեզը (Հայաստանի սահմաններում օֆիոլիտային ասոցիացիայի ապարների պալեոօվկիանոսային կեղևի հատվածները թեմայով) և նույն թվականին ընտրվել՝ երկրաբանական ֆակուլտետի Միներալոգիայի, պետրոլոգիայի և երկրաքիմիայի ամբիոնի վարիչի պաշտոնում, ստանալով պրոֆեսորի կոչում:

2000–2005 թթ. միջազգային գիտատեխնիկական կենտրոնի շրջանակներում ղեկավարել է “Հեղուկ ռադիոակտիվ թափոնների էֆեկտիվ վնասազերծումը բնական մոդիֆիկացված ցեոլիտների օգնությամբ” գիտական ծրագիրը:

Ունի ավելի քան 200 գիտական աշխատանքներ, գիտատեխնիկական հաշվետվություններ և 3 մենագրություններ՝ նվիրված երկրաքիմիայի, միներալոգիայի, պետրոլոգիայի և երկրաէկոլոգիայի հարցերին:

Հրատարակել է մի շարք ուսումնամեթոդական ձեռնարկներ:

Նրա ղեկավարությամբ գիտության թեկնածուի թեզեր են պաշտպանել երիտասարդ գիտնականներ, թե՛ Հայաստանից, թե՛ արտերկրից (Գերմանիա, Սիրիա, Իրան և այլն) :

Ռ.Գ. Գևորգյանն ունի 2 գիտական արտոնագիր, որոնք վերաբերում են հատիկավոր սորբենտի և "Ազոցեովիտ-1" էկոլոգիապես մաքուր կենսապարարտանյութի ստացման եղանակներին՝ նվիրված գիտական նորամուծություններին:

ԵՊՀ-ի հիմնադրման 90-ամյա տարեդարձի կապակցությամբ Ռուդոլֆ Գևորգյանը պարգևատրվել է պատվոգրով, իսկ 2008 թ.-ի փետրվարին ստացել է հավաստագիր "Ուսումնական գործընթացի կազմակերպման կրեդիտային համակարգ" թեմայով վերապատրաստման դասընթացներ անցնելու համար:

Իր բազմամյա գիտաուսումնական գործունեության ընթացքում Ռուդոլֆ Գևորգյանը կատարել է մի շարք կարևոր գիտական աշխատանքներ՝ ուսումնասիրել է Փամբակի ալկալիական և Հարցի (Գերմանիա) գրանոիդային ապարների զանգվածի պետրոլոգիական և երկրաքիմիական առանձնահատկությունները, օֆիոլիտային ասոցիացիայի ապարների պետրոլոգիական, երկրաքիմիական և ծագումնաբանական յուրահատկությունները, նրանց հետ կապված գունագեղ քարերը և հատկապես բնական ալմաստների բյուրեղների երևակումները: Հիմնել է Մոսկվայի Վերնադսկու անվան երկրաքիմիական ինստիտուտի հայակական մասնաճյուղը, որտեղ կատարվել են սեյսմաերկրաքիմիական և էկոերկրաքիմիական համալիր ուսումնասիրություններ:

Միջազգային դրամաշնորհների շրջանակներում, նրա ղեկավարած գիտական խումբը կատարել է ուսումնասիրություններ՝ կապված ցեոլիտների միջոցով ռադիոակտիվ թափոնների վնասազերծման հետ:

Ռուդոլֆ Գևորգյանն ունի նաև միջազգային լայն ճանաչում: Նա Սանկտ-Պետերբուրգի Էկոլոգիական, Մոսկվայի՝ Միջազգային ինֆորմատիզացիայի և Նյու-Յորքի Գիտությունների Ակադեմիաների, Ֆրայբերգի լեռնային ակադեմիայի պատվավոր անդամ էր:

Երկար տարիներ եղել է ԵՊՀ Գիտական տեղեկագիր հանդեսի խմբագրական կոլեգիայի անդամ:

Դժվար է գնահատել Ռ.Գ. Գևորգյանի ավանդը հայրենական երկրաքիմիայի, պետրոքիմիայի և միներոլոգիայի բնագավառում:

Ռուդոլֆ Գրիգորի Գևորգյանի՝ հարգված գիտնականի, տաղանդավոր կազմակերպչի և վաստակաշատ դասախոսի հիշատակը վառ կմնա մեր սրտերում:

*ԵՊՀ ռեկտորատ,*
*Աշխարհագրության և երկրաբանության*
*ֆակուլտետի դեկանատ,*
*"Գիտական տեղեկագիր" խմբագրություն*